ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք.Եղեգնաձոր 20 փետրվարի 2017թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը և հանձնաժողովի անդամները:

Նիստին հրավիրված են Եղեգնաձորի զբաղվածության ծառայության կենտրոնի տնօրենի տեղակալ Սամվել Ավետիսյանը, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ.Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագրի կատարման վերաբերյալ՝ զեկուցող հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյան:
2. 2016թ-ը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների տարի հայտարարելու մարզային միջոցառումների կատարման վերաբերյալ/ զեկուցող փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյան/
3. Մարզի զբաղվածության կենտրոնների կատարած աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների լուծման ուղղությամբ /զեկ. Եղեգնաձորի զբաղվածության ծառայության կենտրոնի տնօրենի տեղակալ Սամվել Ավետիսյան/:
4. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կատարած աշխատանքները 2016թ-ը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների տարվա կապակցությամբ :
5. Վայոց ձորի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների ձևաչափերը/զեկ.Ց.Բաբայան/
6. <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագիրը
7. Ընթացիկ այլ հարցեր

Քննարկեցին՝ Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ՀՀ Վայոց ձորի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագրի և 2016թ-ը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների տարի հայտարարելու մարզային միջոցառումների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը: <<Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտությունների կենտրոն>> ՀԿ-ի փոխնախագահ Խնկանուշ Մարկոսյանը, <<Շուշան>>ՀԿ-ի նախագահ Նարինե Հախվերդյանը, <<Հույս 98 >> ՀԿ-ի նախագահ Ա.Սաֆարյանը ներկայացրեցին 2016 թվականին իրենց ՀԿ-ների կատարած աշխատանքները:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ուղղությամբ կատարած աշխատանքների մասին ներկայացրեց Սամվել Ավետիսյանը:

Քննարկվեց հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագիրը և <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագիրը և միջոցառումների ցանկը >>:
Ց.Բաբայանը ներկայացրեց վիճակագրական ձևաչափերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հսկողություն սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքին:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում իրազեկման աշխատանքներ տանել զբաղվածության ծրագրերի վերաբերյալ:
3. ՀՀ կառավարության 2017թվականի հունվարի 12-ի նիստի N 1 արձանագրային որոշմամբ հաստատված <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրը և միջոցառումների ցանկը >> մարզի ՀԿ- ների հետ համատեղ ներկայացնել բոլոր շահագրգիռ կողմերին՝ մամուլի, համացանցի և քննարկումների միջոցով:
4. Վիճակագրական ձևաչափերը ներկայացնել ՀՀ ԱՍՀՆ:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան
Քարտուղար Ց.Բաբայան
20.02.2017թ.